ՊՈՏՍԴԱՄԻ ԺՈՂՈՎԸ
ԵՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ռէյթրը Լոնդոնից հաղորդում է, թէ Պոտսդամի ժողովը շարունակում է իր աշխատանքները։ Թրումանը, Ստալինը և Չըրչիլը շարունակում են իրենց խոսակցութիւնները։ Ժողովի խորհրդակցութիւնները մընում են կատարելագէս քողարկած։ Մոսկուայի կարեւոր թերթերը— «Իզվեստիա»-ն և «Պարմիր Ասաղ»-ը, հրատարակել են միայն մի շարք նկարներ, որովհետև ցայժմ ոչ մի տեղեկութիւն չկայ Երեք Մեծերի խոսակցութիւնների ու որոշումների մասին։ Սոմունիստական կուսակցութեան օրգան՝ «Պրաւդա»-ն ևս մի յօդուածով անդրադարձել է Պոտսդամի ժողովին և այդ ժողովը վի ժեցնել փորձողների արարքներին ու ջանքերին (Յօդուածի լրիւ թարգմանութիւնը՝ յաջորդիւ։— «Ալիք»)։

Վերջին օրերում խօսւում է, որ Երեք Մեծերի շօշափած խնդիրների մէջ ներառւում են Թրիեստից մընչև Թանջէ տարածուող հողամասերին առնչւող հարցերը։

Ռէյթրի քաղաքական բաժնի խմբագրապետը հաղորդում է, թէ Ամերիկայի «Հայ Յառաջադիմական Ազգային Խորհուրդը» առաջարկել է Երեք Մեծերին՝ Հայաստանի խնդիրը ևս ներառել Պոտսդամի ժողովի օրակարգի մէջ և հետևաբար կարող է պատահել, որ այդ խնդիրը քննւի Պոտսդամում։ Լոնդոնի լուսատեղեակ շրջանակների կարծիքով, անցեալ Համաշխարհային Պատերազմից յետոյ Թիւրքիային տրւած հայաբնակ Ղարս և Արդահան Նահանգների վերադարձման պահանջը դրւել է խորհրդային կառավարութեան կողմից՝ Թիւրք-խորհրդային նոր բարեկամական համաձայնագիր կնքելու առթիւ տեղի ունեցած բանակցութիւնների պահուն։ Լոնդոնում շրջան առած լուրերի համաձայն, Պոտսդամում պիտի քննւեն Խ. Միութեան և Թիւրքիային առնչւող խնդիրները և որովհետև Մոսկուայի ձայնագիրից հաղորդւել է «Հայ Յառաջադիմական Ազգային Խորհրդի» դիմումը, պիտի եզրակացնել, որ Խ. Միութեան գոհունակութիւն պիտի պատճառի այդ հարցի ներառումը՝ ժողովի օրակարգի մէջ։ Այդուհանդերձ, Լոնդոնի դէտերի կարծիքով, Բերլին առաքւած նման հեռագիրները ոչ մի ազդեցութիւն չպիտի ունենան ժողովի օրակարգի վրայ։

Թերթերից մէկը իր առաջին էջը յատկացրել է Պոտսդամի ժողովին և գերման «Քրիստոնեայ Դեմոկրատների Միութիւն» կուսակցութեան նոր օրգանին։ Նոյն թերթը հրատարակել է նաև ամերիկեան «Բրիսչըն Սայնս Մանիթըր» թերթի յօդուածի շուրջ ցասսի հաղորդած լուրերը, (Տես մեր երէկւայ թիւը՝ «Ալիք»)։ որտեղ այդ թերթը իրաւացի է գտնում Խ. Միութեան՝ Դարդանելի հակասութեան վերաբերեալ արած առաջարկները։